Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ու Թ Յ Ու Ն

**Վեդի համայնք** **03-ը օգոստոսի 2022թ.**

***ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝***

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ծածկագիր 3.1-25)** (Գոռավան բնակավայր) **համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար**

***Նշված պաշտոնը զբաղեցնող համայնքային ծառայողն իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված հետևյալ հիմնական գործառույթները՝***

1. կատարում է բաժնի պետի հանձնարականները՝ ժամանակին և պատշաճ որակով.
2. անհրաժեշտության դեպքում, բաժնի պետի և կամ/ վարչական ղեկավարի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին.
3. իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
4. իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է բաժնի պետին և վարչական ղեկավարին.
5. հսկողություն է իրականացնում բաժնի պետի և վարչական ղեկավարի հանձնարարականների կատարման ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում ձեռնարկում է համապատասխան միջոցներ և այդ մասին պարբերաբար զեկուցում է բաժնի պետին և վարչական ղեկավարին.
6. ստորագրում է իր կողմից պատրաստվող նյութերը.
7. հետևում և միաժամանակ հսկողություն է իրականացնում բնակավայրի մտից, ելից փաստաթղթերի հաշվառման ուղղությամբ,
8. Բաժնի պետի հանձնարարությամբ ապահովում է դրանց վերաբերյալ վարվող գրանցամատյանների պատշաճ լրացումը, հաշվառումը և պահպանումը.
9. ապահովում է ցանցերի, համակարգերի ծրագրային անխափան աշխատանքը.
10. իրականացնում է համակարգի ներսում նոր ծրագրերի տեղադրման գործընթացը.

11. կատարում է բաժնի պետի այլ հանձնարարականներ:,
12. հետևում և միաժամանակ հսկողություն է իրականացնում համայնքապետարանի մտից, ելից փաստաթղթերի հաշվառման ուղղությամբ, ապահովում է դրանց վերաբերյալ վարվող գրանցամատյանների պաշաճ լրացումը, հաշվառումը և պահպանումը.
13. իր կատարած աշխատանքների վերաբերյալ կիսամյակը մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում բաժնի պետին.
14. իրականացնում է բաժնի պետի և վարչական ղեկավարի այլ հանձնարարականները.

Առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ, կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

***Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝***

միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի և փորձի:

***Դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝***

- դիմում մրցութային հանձնաժողովի անունով (լրացվում է փաստաթղթեր ներկայացնելիս).
-տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմների, վկայականների պատճենները՝ բնօրինակի հետ միասին.
-հայտարարություն այն մասին,որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.
-հայտարարություն այն մասին,որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- արական սեռի անձինք ներկայացնում են զին.գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք.
- մեկ լուսանկար 3x4 սմ չափսի.
- անձնագրի պատճենը՝ բնօրինակի հետ միասին:

***Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի սեպտեմբերի 5-ին, ժամը 11:00-ին, Վեդու համայնքապետարանում***

Դիմողները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:

Դիմողները փաստաթղթերը կարող են ներկայացնել աշխատանքային օրվա ընթացքում՝ ժամը 09:00-ից մինչև 18:00-ն, նշված հասցեներից որևիցե մեկով՝

1. *Վեդու համայնքապետարան*
   **ք.Վեդի, Թումանյան 6**
   **2-րդ հարկ, քարտուղարության և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին**
   **հեռ.0234-2-33-32**

2. *Արարատի մարզպետարան*
   **ք.Արտաշատ, Օգոստոսի 23-ի փողոց թիվ 60**
   **5-րդ հարկ, ՏԻ և ՀԳՄ վարչություն,**
   **հեռ.0235-2-34-65**

***Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է 2022 թվականի օգոստոսի 21-ը:***